ցող էին հավաքում, բերում՝ ածում էին ջրի վրա, և դրանով իրենց գլուխն էին լվանում, որպեսզի մազերը երկարեն[47] կամ ածում էին կաթի մեջ, որ կաթը շատանա։ Հինգշաբթի օրն ամեն ընտանիք պիտի եփեր կաքնավ։ Այս մատաղից նա գոնե յոթ ընտանիքի պիտի բաժին ուղարկեր։ Մի քանի գյուղերում շատ տարածված էր հավաքած մթերքով և օրվա ամբողջ կաթով ընդհանուր կաքնավ եփելը։ Մի խումբ կանայք, գրեթե ողջ թաղը, մեծ կաթսայի մեջ միասին եփում էին այդ կաքնավը և թե՛ իրենք նստում՝ ուտում էին Համբարձման կաքնավ, թե՛ բոլոր անցուդարձ անողներին էլ հրավիրում ուտելու, իսկ մնացածն արտերի շուրջն էին շաղ տալիս, որ բերքն առատ լինի։ Կաքնավ մատաղը շաղկապված էր այս տոնի հետ հայկական բոլոր գավառներում։ Դա անկասկած նույն մագիկ միջոցառումն է։ Առհասարակ այս տոնին վերագրվում է աճեցնելու, երկարացնելու, բազմացնելու զորություն։ Ինչպես մայրն է իր զավակին առատ կաթ տալով նրան առողջություն և աճելու ուժ տալիս, զորացնում, այնպես էլ կաթնով մատաղի միջոցով ուժեղացվում էր արթնացած բնությունը, զորացվում ու հասունացվում էր։ Երևի այդ զորության ներգործության վրա ապավինած Սիսիանի մի քանի գյուղերի գառնարածները տնետուն ման էին ածում իրենց արածեցրած գառներից մեկն ու մեկը՝ ծաղիկներով զարդարած՝ ձու և յուղ հավաքում գյուղացիներից։

Հայաբնակ այլ գավառներում գուլում երգելն ու վիճակի խաղը բուն զանգեզուրցիների հին բնակչության գյուղերում այդ օրը տեղի չէր ունենում[48]։ Դրանք տեղի էին ունենում միայն նոր վերաբնակվածների համայնքների մեջ։ Միայն մի քանի գյուղերում պահպանվում էր հնուց շատ տարածված մի այլ սովորություն, այդ օրը գերեզմանատանը ընդհանուր հոգեհանգիստ կատարելը և ամբողջ հասարակությամբ բերած կերակուրներով միասին ընդհանուր սեղանի նստելը։ Արծվանիկում այդպիսի մի ընդհանուր սեղան էր սարքվում գյուղից ներքև ս. Սարգիս եկեղեցու մոտ, նոր գերեզմանատանը, Մելիք-Ֆռանգյուլի գերեզմանից մի քիչ վերև։ Այդ օրն էլ ընդունված էր այցելել մերձավոր խաչերը՝ մանավանդ Մաղավուզի Միծեռնավանքը[49]։

Վրթիվէր։ Վարդավառ տոնը բուն Զանգեզուրում ավելի պարզ ձևերով էր կատարվում, քան թե հայաբնակ այլ գավառներում, նույնիսկ հարևան Ղարաբաղում։ Այստեղ էլ այլ վայրերի պես այս տոնը խիստ հագեցված էր նախաքրիստոնեական նախնական հեթանոսական տարրերով։ Այս օրն էլ այլ

---

[47] Բույսերի, մազերի և այլն երկարելը հմմտ. Ատտիսի առասպելի հետ։ Ձիջելով Կիբէլայի աղերսանքին, Զևսը թեև թույլ տվեց ինքնասպան եղած Ատտիսի մարմինը մնա անխախտ, անեղծ, սակայն միայն նրա մազերն էին երկարում և ճկույթը շարժվում։

[48] Կեսարիո և փոքրասիական հարևան գավառներում Համբարձման օրը կոչվում էր Վարդավառ, իսկ արևելյան հայերի Վարդավառ՝ Սուրբ Կարապետի օր։ Արշակ Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիոյ գավառի, 1937, հ. II. էջ 1769։

[49] Այս խաչի մասին հետևյալ ավանդությունն են պատմում (Ալայեան Ե., Զանգեզուր, էջ 48)՝ վանքը շինելիս ահագին կաթսայով կերակուր են եփում բանվորների համար։ Երբ հասնում է ճաշի ժամը, մի ագռավ պտտվում է կաթսայի վերև և շարունակ կռկռում, իսկ երբ բանվորները նստում են ճաշի, ագռավն ահագին կռկռոցով իրեն ձգում է կաթսայի մեջ։ Բանվորները պղծված կերակուրը թափելով զարմացած տեսնում են, որ կերակրի մեջ օձի մարմնի մասեր են։ Հասկանում են, որ ագռավը փրկել է իրենց կյանքը։ Այդ ագռավին մեծ հանդեսով թաղում են եկեղեցու արևմտյան պատի մոտ, մեծ քարի տակ, իսկ օձի պատկերը գծում են վանքի սյուներից մինի վրա։ Ագռավի գերեզմանն այնուհետև պաշտվում էր և ուշ վոտրնվոր-վոզ երեխային տանում էին այդ քարի մոտ, մոմ վառում, մի մեխ կամ ձու դնում քարի տակ. երեխայի ոտները լվանում, որպեսզի շուտով սովորի քայլել։